

Բ զիշիներ և Մհամածէ Օժօմանի խմբագիր Մհծ. Յովսէկի էք. ուսեալ և հայրենասէր երիւ առասարդն՝ Ապտուլահին Մհծ. Եղբարց միարար ու ազգորու նպատակին հնուելով՝ արոր ընդ Գեր Փամանորդ Հօր Բարձր. Ա. Պատրիարք Հօր Ներկայացաւ և իւր մայրենի Ամժողիկէ Ա. Եկեղեցւց զիշին վերագառնալու փափաքն յայտնելով՝ օր Հնութեամբ ընդունուցաւ:

Նոյնպէս գոհութեամբ կծանուցանեմք Ասեմ. Աերլիւն էփէնտի որդի Մհծ. Արիչն էփէնտի՝ անցեալ կիրակի օր իւր Լատին կողակցւոյն հետ անձամբ մեր Ուրագան Պատրիարք Հօր զիմելով՝ ընդունիցին Հայաստանեաց Ա. Եկեղեցւց զաւանութիւնն:

ԿԵԼԿԱԾԹԱՑԻ.

Կալկումային Սեպտ. 10 թուով Կղմիրի Արշալյոս լրազրին զրտած մի նամակ կտեսնեմք։ Նամակագիրը կասէ թէ քառասուն տարիէ ի վեր այս առաջին անգամ է որ Հնդկաստանի Հայք առաջնորդի երես կրտեսնեն և հովուական այցելութիւն կը վայելնեն Զարմանափի չէ ուրեմն որ Հնդկաստանի Հայ ժողովուրդներն այսափ տարի այցելութիւնէ զուրկ և անխնամ մնալով՝ հետզետէ պաղեն իրենց արդէն ու եկեղեցիէն, և օտար գաւանութեանց յարելով կորնչին։

Յուսպիէ որ այս հովուական ազդեցութիւնն ըստ արժանացն կատարուելով՝ ազգային՝ կրօնական որին վերատին արծարծէ Հնդկաբնակ Հայոց մէջ և մօտագրւած կորստեան գոտաղը հիւացնէ։ Աշաւատիկ միշեալ նամակին պատճէնք։

Ո Քանզի ի բազում ամաց հետէ՝ այս է ի քառամնից, հազիւ իմն յաջողեցաւ տեսանել ի Հնդիկս զԱռաջնորդ ոք մերազնէից այսր շնորհաւեր հանդիսանալոյն ոյր վասն կարևոր վարկայ զանցո նորա ցայս վայր աստ եղելոյ ի զիր անցուցնալ ձերդ յարգաւթեան մատուցանել ի հըրատակումն միջոցաւ լըագրոյն ձերոյ ընդ կոտարումն որոյ խնդրիմ ազգասիրամբար համիլ։

Ո Ի 9 Օգոստ. 1875 թուոյս գերապատիւ տէր Գրիգորիս սրբազն Առաջնորդն Պարսկաստանի և Հնդկաստանի Հայոց ժամանեցաւ ի մայրաքաղաքս Կայկաման որում ընդ առաջ իրեալ դասր հոգեուականաց և ոմանք ի պատուելի մերազնէից աստի՝ ընկապան զնա մեծաւ յարգանօր, որ և ըրնամի արդէն ի վելին յարկս հոյակապ շինուածոյ Նալարէթայ սուրբ եկեղեցւոյս մերոյ առա պարտապատշաճ մեծարանօք և ընդունկութեամբ։

Ո Ի 27 Օգոստ. յարզելի պարօն Թուման Մելքոն քումեան եկեղեցապան Կալկամայ և 2իշրայ եկեղեցեացն Հայոց յայտարարական զրով ծառուցմն արար պատուեալ Հայ հասարակութեան ի օրինական ամառապատշաճ մեծարանօք մայրաքաղաքիտ վոր յարզելի եկեղեցապան պարօն Թուման Մելքոնեան՝ իբր ի կողմանէ ամենեցուն մատոյց, որոյ իմաստն էր նաև

մեան քաղաքիտ զառաջազրութեանէ Նորին Սըրբաղնութեան սակս մատուցման սրբոյ Պատարագի ի 29 Նոյն ամաց ի տօնի հրաշամառ Ա. երամուսման Տիրամօրն սրբոյ Աստուածածին, և խնդրեցաւ ներկայութիւն ամենեցուն մերազնէից ի Նաղարէթայ սուրբ եկեղեցին. ըստ այնմ և յառաւօտուն կիւրագէն սկսեալ Ժամերգութեանն ի վեցերորդ ժամ աւուրին եկին խոննցան ամենայն բազմութիւնը հետզետէ, մինչև շինուել անդամ տեղի ի ներքս, և ի պարտաւորութեանէ անտի արտաքս քան զեկենցիցին կանգնել ի զաւիթ անզր ընդ որս և ի Յունաց յԱնզղիացւոց և յայր քանի ևս ի Լատին կամոլիկաց։

Եկեղեցն ի Խորանէ անտի սրբազն պատարագչին ըստ պատշաճի ժամուն, զարդարեալ ի զենաս ոսկեթիւ, ի թագ ոսկիհամանէկ, և յեմփիորոն փառաւոր, ալովքն համգերձ սրբոյ Խորհրդոյն շուրջ մեծ և յարգանս արժանեաց ընծայեալ տպանորդը ի սկսեիպայ խնկարկութեամք երգօք և եղանակօք զպրաց և սարկաւագաց, եկեալ ի զրանէ հիւսիսային կողման ընդ գաւիթ ներքին պարսպի եկեղեցւոյն շուրջ յածեալ, ընդ գուռն արձեկեան և Յարութեան, անուաննալ, մոին ի տաճարն սուրբ յանդիման սրբոյ սեղանոյն, ուրանօր ի յատենի լուացումն կատարեալ, Նոյնպէս և յերկուս առաջ բաժանման մամբ վայելու իմն ելին ի սեղան անզր մի յայս և միւս յայն կողմն աստիճանաց, ուր ի ծունկս անկեալ սրբազն պատարագչին բազկատարած զուրբ աղօթմն մատուցանէր առ Աստուած, և գափիքն ի Խոնարհ ողնարեալ, եղանակէին քաջզր ձայնիւ։

Ա յապէս և ոչ սակաւ էր զարմացումն եկեղեցիացելոց անզր խոռն բազմութեան ընդ հանդիսաւոր վերաբերումն աշաւոր սրբոյ Խորհրդոյն, որ վերաբերեալ ի սեղանոյ անտի շքով մեծաւ և երգօք վայելչականօք քաղցրաձայն ներգաշնակողաց շուրջ զատենին պար առեալ ի հիւսիսոյ ընդ հարաւն եկեալ յաստիճան ի սեղանն անդրէն յաստիճանին սրբութեան բազմեալ, առ որ հայեցողացն միրտ և հոգի միահաղոյն ոչ սակաւ զրտեալ ի ներմուռանզն աղօթմն և ի գոհութիւնոր առ Աստուած։

Ո Ի Ժամ տէրունեան աղօթից սրբոյ Խորհրդոյն կատարեցան և վայելչապէս հանդէօք օր Նութեան խալողոյ, Յատւարտ սրբոյ պատարագին ընթերցեալ եղել հրապարակաւ թուածիթ ի շնորհական ամենեցուն մատոյց, որոյ իմաստն էր նաև

զոհութիւն առ Վեհափառ Հայրապետն Տ. Տ.
Գէորգ Դ. Կամողիկոս ամենայն Հայոց, և ապա
շնորհաւորութիւն գալստեան նորին Ա. Առաջ-
նորդին որպէս և զօրինսակ նորա ի սմա ծրաբեմ
ի հրատարակում:

“Յաւարտ շնորհակալու թղթոյն յատեան
խաղացեալ նորին Սրբազնութեան՝ խօսեցաւ
բանո ինչ սրուառուչու թէպէտու հակիրճու սակո
երկարութեան ժամանակին ի տօժագին եղանա-
կի քաղաքիս այլ ազդու իմն իմաստիւք, նախ ի
զիմաց Հայրապետին, որ իրրե հայր բազմագրով
զմտաւ ածեալ հանապազ զամենայն զիոգեոր
որդեակու իւր հարազատ թէպէտ և կարի տա-
րանջատս յինքինէ, տածեալ խնամէ և դարձմանէ
զամենեսեան, ոչ թողլով ի նոցանէ ի բաց առ ի
ջամբել զուրբ կամն ուղղափառ վարդապետու-
թեան Մօրս մեր լուսոյ Հայաստանեայց կամողի-
կէ սրբոյ Էջիածնի, և եթէ ոչ անձամբ զէթ և
ի պատկերի մից յեպիսկոպոսազ իւրոց եղանէ ի
յայց ամենայն հօտի իւրում, և ի դէմն նոցին
պատկերանայ իրրե նոյն իւրն առ ամենեսեան,
և իրրե ի մօտոյ հայրագութ սիրով ընտ հօվան-
հաւ իւրով հօվուէ և հանգուցանէ զնոսա. ապա
կնքէ և զբան իւր՝ իւրով շնորհակալութեամբ,
օրհնելով զամենեսեան և յանկուցանելով զոկր
և զամանակութիւն ամենեցուն առ ինքն:

“Հուսկ յետոյ աւարտի ամենայն և արձակին
ամենեբեան իրրե ի մետասաներորդ ժաման-
աւուրն իւրաքանչիւր ոք ի բնակութիւն իւր:

“Իսկ արզ սրբապի նորին Սրբազնութիւնն
ի յայցիութիւն պատուեալ մերազնէից ասու և
ընդունի զընդունիլութիւնս ի նոցանէ սիրա-
հրաւեր մեծարանօք այցելու հանիսանայ ի
Մարդասիրակուն ճեմարանն Հայոց, ուր և ճա-
ռախօսութիւն լինի յաշակիրսաց, քննէ զման-
կունուն ի յընթերցանելիուն և ի շարադրուածնն
խրախուսէ և յորդորէ զնոսին յամենայի փու-
թածնն լինել ի յիմացական և ի բարյական
ուսմունա լինել օրինաւոր անդամ ազդի և եկե-
ղեցւոյ հետամուտ լինի ի կառավարութիւնս
հոգաբարձուաց կազզուրէ և յորդորէ զնոսա
յես առաւել եռանդն ժրութեան, և օրհնու-
թեամբ շահէ զնոսին. այցելու նաև գտանի յայց
դպրոցս Լատինացւոց և ննդիացւոց և ի տը-
պարանս նոցին, ևս և եպիսկոպոսաց նոցա, և
ընդունի ի նոցունց զայրանս մեծարանաց ի
շուք և ի պարծանս մեր և ազդի ։”

Խ. Ծ. Կարուպէտ Մարքարէտ Ա. Գուրէանց.

Աստ արժան կհամարիմք ի նամակիս
յիշատակիալ Պ. Թօվմաս Մէկըումեանի
ի զիմաց Հայոց Կալիսթայու ուղերձած
շնորհակալութեան և շնորհաւորութեան
թուղթը ևս հրատարակել:

ո Շնորհարեր եկաւորութիւն մեր ի մայրապազարս
կամկաթայ, ո Ալապերտաշնորհ սրբազան Հայր, ի մեռ-
եւ յայցելութիւն բանաւոր հօտի Զերում, մերազ-
մեայ հասարակութեանս բնակելոյ աստ, ապաբէն մե-
ծի իմն խնդութեան արժանի արար զմեզ զամենես-
եան. այն զի՞ զբազմաժամանակեայ հետէ զցանկալին
զակն հոգւոց ի Հարց պատմեալ եւ արդ առ որդիս
վճարեալ զիերա. Առաջնորդ մեր տեսանեմք այսօր
ակն յանդիման ընդ յարկաւ սրբայ տաճարիս բազ-
մեալ ի սեղան սրբութեան, որ զամանէ եւ զամանա-
հարաբն մատուցանէ զուուր պատարագ ի սրբութիւն
եւ ի միթիթարութիւն հօտին իւրոյ, եւ ի միացումն
հաղորդակցութեան զինուորեալ եկեղեցւոյս ի խոր-
հրաւեան գլուխ Տէրն մեր Յիսուս Քրիստոս,

Ցուշ ածեմը ամեներեան աստանօր ի սիրու եւ ի
բարբառ սրբութեանս սիրախ ձայն որիելի տ-
շակերպան աւետարանէալ, թէ յոր առւն մտանցիցք ք-
աւասչզք ողջոն տանս այսմիկ: զոր բան աւափի հե-
տեւաբար ի ձեզ եկեալ հասեալ վայելեմք պայոր
բարեբաղդաբար իրերւ ի բերանոյ Հօր քալցրաբա-
րոյի լուեալ ի մօտոյ ականջօք, եւ ի ձեռանէ Տէր-
ուըն բարեխնամի առընկալեալ զոգանօք, համբուրիս
սրբոյ Օծութեան Զերոյ փառաւորիմբ:

Եւ իցէ, իցէ արդեօք առաւել ինչ արժանի բերկրա-
նաց, քան երկնախին որ վայելչացեալ շնորհաց եւ Աստ-
ուածապարզեւ որշնութեան, որպիսի պարփսի ի ժա-
մուն վայելեմք մեք ի նոյն ի ձեզ պատն սիրոյ եւ
շնորհաց Աստուածամին օրհնութեան, ի բանն թէ
ու շանդից ողջոնն մեր ի վերայ նոցա . . . Մէք աշա-
պիկիք մեր հօգեհեանք, մեք ահա եւ հարազաւ սե-
ռունդք Մօրս մեր լուսոյ Հայաստանեայց կաթողիկէ-
որբոյ Էջմիածնի:

Հապա եւ մեր նախ զառաջինն այսօր, ո գերասուրի-
ճանեմել Հայր, միակամ եւ միաբան համութեամք
նուիրեմք անկեղծ սիրոյ գոյշունակութիւնն առ Վե-
հափառ Հպարտեան ամենայն Հայոց Տէր Գէորգ Պ-
տուրյագուն Պատրիարք եւ կաթողիկոս Արքարատեան
Մայր Աթոռույ Սրբայ Էջմիածնի, որ քաղցր ակնար-
կութեամք իւրով բարեհաճեցաւ առ արել առ մեզ
զամլեւէք բարեխնամի ի յայցել մեղ եւ ի միթիթարել
զերք ըստ հօգեւոյ:

Հուսկ ապա եւ յարդակրս սիրոյ շնորհաւորեմք
այսօր զամկալի գալուստ Զեր ի յայցելութիւն մե-
րում հասարակութեան: Խաղաղութիւնն է մուտ ձեր,
խաղաղաէրդ եկեղեցւոյ Տեառն բարձրելոյ. ահա
չօտ ձեր ցանկալի ահա ժողովուրդ ձեր կազմեան,
վայելեմք արդ ուրեմն ի մէք հարազաւաց հօգե-
ւոր որդւոց եւ յուղեչիք ի գլուխ զցող շնորհաց օրհ-
նութեան ձերոյ: Եւ ձեզ ահա ժամ բարեպատեհ,
ո հոգեւոր Հայր, ընդ առատանդ օրհնութեան ձե-
րոյ յանդուանել ի ձեզ զարբան ու զհամակրութիւնն
սերու սիրոյ ոցին այսոցի հօգեթեին որդւոց Հայաս-
տանեայց սուրբ. Եկեղեցւոյ ի խսկմուն հօգեհեապատ
հարհուրդաց ի փառա ամենեցուն:

Կեցցէ ուրեմն հօգեւոր Հայրդ մեր, կեցցէ եւ բա-
րեկնամ Հովիւդ մեր ընդ բանաւոր հօտի ձերում ի ծոց
Մօրս մերոյ Հայաստանալացց հեկեղեցւոյ անսամն ընդ-
յամայ ամս ամենայն աջաղուածիլ բարեաց, ի յառաջ-
նորդել ունայիթափ ի ձեզ յանձնեալ հօտին Քրիստոսի:
Համեմունց արդ ո սրբազան Հայր, զայս թուղթ մեր
դուղնաբեաց թէպէտ, այլ անկեղծ սիրոյ եւ հաւա-
տարմութեան պատուեալ Հայ հասարակութեան բա-
րժափին ընդունել ի համայս, զոր համութեամք յար-
դերէ աւետապահաց եւ գործակալաց պաշտօնակցաց
ինոց, խորին ակնածութեամբ եւ մեծարանօք ահա ձեզ
մատուցանեմ ի գիմաց ամենեցուն:

Տերու բուրժ արքանեւն լո. Ծ.
(կնիք եւ ստորագրութիւն).